



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/30

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.07.2017թ. թիվ 04/27-1/12821-17 գրությամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 03.07.2017թ. թիվ 04/9/2525-17 գրության հիման վրա, 13.07.2017թ. թիվ 04/27-1/12821-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.07.2017թ. թիվ 18 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 21.06.2017թ.:

Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 20-րդ, 21-րդ և 44-րդ չափաբաժինների մասով:

Այսուհետև հարկային պարտավորությունների ստուգման նպատակով կատարված հարցման ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 173 253 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հայտը մերժվել է:

Հաշվի առնելով, որ տեղեկանքում նշված հարկային պարտավորության չափն իրատեսական չէր, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ կատարված ճշգրտման արդյունքում պարզվել է, որ Ընկերության հարկային պարտավորությունների չափը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է ընդամենը 32 121 ՀՀ դրամ, որը ըստ Ընկերության, համապատասխանում է թե «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) և թե «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

• Ընկերության գնային առաջարկը ըստ չափաբաժինների կազմել է՝ 20-րդ չափաբաժնի համար՝ 4 596 396 ՀՀ դրամ, 21-րդ չափաբաժնի համար՝ 6 808 000 ՀՀ դրամ, 44-րդ չափաբաժնի համար՝ 3 638 160 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտը համապատասխանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել օրենքով նախատեսված շեմը գերազանցող չափի ժամկետանց հարկային պարտավորություններ, քանի որ առկա հարկային պարտավորության չափը չի գերազանցում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկների գումարների 1 տոկոսը:

Ընկերությունը նշել է նաև, որ «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր հայտը մերժելու որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Վերոհիշյալ գրությանը կից «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանքը՝ Ընկերության 21.06.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.07.2017թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 03.07.2017թ. թիվ 04/9/2525-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական

աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.06.2017թ. կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության, ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 173 253 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.07.2017թ. ժամը 10:50-ի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/30 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/30 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.06.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով կայացված որոշմամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 20-21-րդ, 44-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 27.06.2017թ. տրամադրված եզրակացության՝ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.06.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 173 253 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.07.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 5/1 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2017թ. թիվ 04/27-1/12821-17 գրությունը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 03.07.2017թ. թիվ 04/9/2525-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիստոն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին փակվելու մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.06.2017թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով կայացված որոշմամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 20-21-րդ, 44-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

*ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 27.06.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.06.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 173 253 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.07.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 5/1 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարավիրարույի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.07.2017թ. թիվ 04/27-1/12821-17 գրությամբ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06922391) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ